X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

10 հոկտեմբերի 2023թ

N 1471-Ա

ՀՐԱՄԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 507-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 26-րդ կետի 10-րդ ենթակետով՝ հրամայում եմ.

1. Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը սահմանելու մասին» N 507-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

10/10/2023

X ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 2611780209

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի
«10» հոկտեմբերի 2023թ. N 1471-Ա հրամանի

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի
« 08 » ապրիլի 2019թ. N 507-Ա հրամանի

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

N	ԲԱԶԱՅԻՆ	ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ
1	**Իրավական ակտեր** • Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն • Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրություն • «Հանրային ծառայության մասին» օրենք • «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք • «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք • «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենք • «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք • «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենք	**Իրավական ակտեր** • «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենք • «Պաշտպանության մասին» օրենք • «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենք • «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենք • ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում • ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի «Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 591 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1880-Լ որոշում

2	**Այլ** • Հայերենի իմացություն՝ «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012: http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf • Մեկ օտար լեզվի (ռուսերեն կամ անգլերեն) իմացություն • Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ունակություն՝ Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012: http://fliphtml5.com/fumf/egdx	**Այլ** • Համակարգչային հիմնական գործիքների (Word, Excel, PowerPoint) վարժ կիրառման, ինչպես նաև համակարգչային տեխնիկայից օգտվելու ունակություն